ՀՏԴ 37.013:81՝04

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վաղ միջնադարում, Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումից հետո առաջ բերված դպրական շարժմանն ու դպրոցաշինությանը զուգընթաց, Հայաստանում հիմք դրվեց մանկավարվարժության տեսությանը, որը դարից դար հարստանալով ու կատարելագործվելով՝ դարձավ հզոր պատվանդան հայ մանկավարժական միտքի զարգացման համար: Հայ ականավոր մանկավարժ-գիտնականների գործունեության շնորհիվ մանկավարժական միտքը միջնադարում զարգացման իր որոշակի առանձնահատկություններով ձեռք է բերել առաջանցիկ բնույթ, որի քննությանն է նվիրված սույն աշխատանքը:

Առանցքային բառեր. դպրոցաշինություն, համալսարաններ, հայ մանկավարժներ, մանկավարժական առաջանցիկ դրույթներ, մանկավարժական մտքի զարգացում:

Հայաստանում կրթական-լուսավորական, դպրոցաշինության գործի, նաև մանկավարժական մտքի սկզբնավորումը կապվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: Սակայն Մաշտոցը, բնականաբար, ունեցել է նաև նախորդող փորձ:

Հայոց արքունիքում, համաձայն 5-րդ դարի հայ պատմիչների և հատկապես Խորենացու վկայությունների [1], մշտապես կարևորվել են կրթության և, առանձնապես, ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերը:

Դեռևս մ.թ. առաջ հայոց արքաներից Արտաշես Ի-ը, Տիգրան Մեծը գտնում էին, որ չի կարող գոյություն ունենալ հզոր պետություն՝ առանց հզոր դպրոցի: Տիգրան Մեծի արքունիքում գործում էր, այսօրվա լեզվով ասած, կրթական «գերատեսչություն»: Հայ պատանիներին նպատակային կերպով «գործուղում էին» Հունաստան և Հռոմ՝ կրթվելու, այլ երկրներից էլ ուսումնական գործի համար հրավիրում էին առաջադեմ գիտնականների: Իսկ IV դարում Արշակունի Տրդատ թագավորը, ըստ Ագաթանգեղոսի, կարևորել է ուսուցման և դաստիարակության գործընթացում երեխաների տարիքային, հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելու, պետական անվճար դպրոց ունենալու, ուսուցչին նյութապես ապահովելու և նման այլ խնդիրներ:

Զուգահեռ անցկացնելով համաշխարհային պատմության նորօրյա իրողությունների հետ՝ արժե այս առիթով հիշատակել Բիսմարկի հայտնի ասույթը՝ «Գերմանիան կառուցել է պրուսական ուսուցիչը»:

Ուշագրավ է, որ վերոնշյալ գաղափարները եվրոպական դասական մանկավարժության մեջ իրենց հիմնավորումը ստացան միայն XVII- XVIII դարերում [2]:

Այսուհանդերձ, **հայեցի կրթության և հայ մանկավարժական մտքի առաջամարտիկը Մեսրոպ Մաշտոցն է:** Գրերի գյուտից հետո համատարած գրագիտություն տարածելու նպատակով Մաշտոցն իր աշակերտների հետ Հայաստանի բոլոր և հատկապես սահմանային գավառներում հիմնեց դպրոցներ [3,4], որտեղ էլ ծագեց ու սկսեց զարգանալ հայ մանկավարժական միտքը: Գիրը հայ ժողովրդի կյանքում ունեցավ մի բացառիկ նշանակություն. առաջ բերվեց հաստատուն դրվածք՝ «Ճանաչել զիմաստութիւն»՝ որպես առաջընթացի ուղենիշ և խթանիչ: Գրագիտության ապահովմամբ դրվեց ինքնուրույն մշակույթի զարգացման, դրանով իսկ՝ հայոց էթնիկ էութենական միասնության հիմքը [5]՝ որպես պատվար աննպաստ դարերում ազգապահպանության համար:

Մաշտոցի մանկավարժական գործունեության հիմքում ընկած էր նրա աշխարհայացքին բնորոշ և՛ անհատ մարդու, և՛ սերունդների, և՛ ողջ ազգի ինքնաճանաչման ու կատարելագործման գաղափարը: Նրա հիմնադրած դպրոցը [3, 6, 7, 8].

- Նախ և առաջ ժողովրդական ու անվճար էր՝ շնորհիվ նաև Վռաշապուհ արքայի պետականամետ մտածողության ու աջակցության:

- Առաջին աշակերտների ընտրությունը և հոծ բազմությամբ ընդգրկումը միտված էր «գիտելիքը պիտի փոխանցվի սերունդներին» ուղենիշի կենսագործմանը.պատրաստվում էր ուսուցիչների հերթափոխ: Այդ առումով միանգամայն գիտակցված ու նպատակային էր նաև այն, որ Մաշտոցն իր հետ Միջագետք տարավ առաջադեմ աշակերտներին, նրանց հետ բացեց առաջին դպրոցները, նրանց գործուղեց առաջավոր երկրներ՝ կթրությունը շարունակելու:

- Թարգմանչական աշխատանքով խթանվում էր անտիկ աշխարհի առաջադեմ գաղափարների յուրացումը:

- Ուսուցիչներից պահանջվում էր գործի և խոսքի միասնությամբ տիպարային օրինակ ծառայել իրենց աշակերտներին՝ զգայուն վերաբերմունք ցուցաբերելով նրանց նկատմամբ:

Կրթության-լուսավորության գործում մաշտոցյան ավանդույթները շարունակեցին հետագա դարերի բոլոր հայ մեծ մտածող-մանկավարժները: Միջնադարում այդ նվիրյալները շատ-շատ են, սակայն ստորև կանդրադառնանք նրանցից միայն մի քանիսի գործունեությանը: Բայց նախ՝ մի երկու խոսք միջնադարյան հայկական ուսումնական հաստատությունների մասին:

Հայաստանում մշտապես գործել են տարրական (ծխական) դպրոցներ [6], որտեղ ուսուցանվում էին գրաճանաչություն, տարրական թվաբանություն,

կրոնաեկեղեցական և առօրյա-կենցաղային անհրաժեշտ գիտելիքներ: Գործել են նաև առանձին վանական դպրոցներ, որոնք աշակերտներ էին պատրաստում եկեղեցու սպասավորության համար: Սակայն հայ մշակութային ժառանգությունն ու գիտական միտքը զարգանում էր միջնադարյան հայկական համալսարաններում [6, 7], որոնց կից գործել են նաև մասնագիտական թեքումներով ճեմարաններ: Աստվածաբանությունից զատ, այդտեղ դասավանդվում էին ինչպես հումանիտար-հասարակագիտական, այնպես էլ բնագիտական առարկաներ՝ մաթեմատիկա, տարրաբանություն, աստղագիտություն, տոմարագիտություն, մարդակազմություն, գրչության արվեստ, մանրանկարչություն, երաժշտություն և այլն: Իսկ մանկավարժական մտքի զարգացման տեսանկյունից հատկանշական է, որ Տաթևի համալսարանում, օրինակ, մանկավարժությունն ուսումնասիրվում էր իբրև առանձին դասընթաց [4]: Այսինքն՝ մանկավարժությունը՝ իբրև գիտություն, Հայաստանում դարձել էր նաև դասավանդվող առարկա:

Հայկական միջնադարյան համալսարաններում վերագնահատվում ու զարգացվում էր Հին աշխարհի գիտական ժառանգությունը [4, 6].մի իրողություն, որով հայկական համալսարաններն էապես տարբերվում էին Արևմտյան Եվրոպայի միջնադարյան համալսարաններից: Ինչպես նկատում է Պ.Մոնրոյեն, միջնադարյան եվրոպական համալսարաններում ուսուցումն «ուղղված էր առավելապես ձևականի տիրապետմանը և հանդիսավոր խոսքի ուժի, մասնավորապես վիճաբանելու կարողության զարգացմանը, քան գիտության ձեռքբերմանը» [28]: Հետազոտողներից Ս.Լաուրին եվրոպական համալսարանների մասին ասում է. «...բոլոր համալսարանների բարձրագույն ուսումնառությունը սահմանափակվում էր ճանաչված հեղինակավոր աշխատությունների (առանձին դրույթների կամ ասույթների) արտաբերմամբ և մեկնաբանմամբ...», «....բանականության համար սնունդ չկար, սակայն բավականին շատ խիստ մանկավարժություն կար հիշողության և իմացության համար» [29]: Իսկ համալսարանների պատմության մասնագետ Հ. Ռաշդալը եզրակացնում է. «Միջնադարում գիտություն հասկացությունը կամ, ավելի շուտ, նրա գերագույն հիմուքները հազիվ թե անցնում էին այն սահմանից՝ իմանալու, թե ինչ է ասել որևէ մեկը մի բանի մասին» [30]:

Հայկական համալսարաններում օգտագործվել են հույն, նաև հայ գիտնականների ինքնուրույն երկերն ու մեկնությունները [6, 25], զարգացվել մի շարք գիտություններ: Ուսումնական այս կենտրոններում մշակվում էին նաև մեթոդական ցուցումներ ու հրահանգներ՝ դասընթացները մատչելի, յուրացումը դյուրընկալելի դարձնելու համար: Անդրադառնանք միջնադարյան հայ մեծ մտածողներից մի քանիսի մանկավարժական գործունեությանը:

1. Եզնիկ Կողբացի. IV-V դար: Եզնիկի քրիստոնեական-աստվածաբանական բարու և չարի՝ ինքնակամության և ազատակամության մասին փիլիսոփա-

յական ուսմունքից բխում է նաև անհատի դաստիարակության խնդիրը [4, 10, 11]: Ինքնակամությամբ առաջնորդվելով՝ մարդը կարող է չարիք գործել, մինչդեռ ազատակամությունը մարդուն տոգորում է այլասիրության և ազատախոհության զգացումով: Աստված ինչ-որ արարել է, բարի է, իսկ իր արարքների համար պատասխանատու է մարդը, ով պետք է ճիշտ ընտրություն կատարի բարու և չարի միջև: Բարին և չարը բնարար չեն, դրանք դաստիարակության հետևանք են: Եզնիկը գտնում էր, որ մարդու մեջ կրթությամբ ու դաստիարակությամբ պետք է պատվաստել բարին, գեղեցիկը, ազնիվը, վեհը, արդարը, ճշմարիտը, օգտակարի ազատակամության զգացողությունը, որով հնարավոր է բարեկրթել նրան: Բարին և չարը պայմանավորված են մարդու կողմից օրինականության պահպանմամբ կամ խախտմամբ. ընդ որում՝ պատժելի է գիտակցաբար գործած չարիքը: Սակայն մարդուն զղջալու և ուղղվելու, ներողամտության արժանանալու հնարավորություն պիտի ընձեռվի, ուսմունք, որ բխում է քրիստոնեական հանցանք-պատիժ-զղջում-ներում վարդապետությունից:

Եզնիկի բարու և չարի քրիստոնեական այս ուսմունքը՝ որպես աշխարհայացքային գաղափարաբանություն, ընկած էր միջնադարյան հայկական կրթական բոլոր հաստատությունների գործունեության հիմքում:

2. Դավիթ Անհաղթ. V-VI դար: Հայեցի դպրության առաջին տեսաբանն է. նրա կողմից գիտությունների՝ տեսականի և գործնականի բաժանումը հիմք է ծառայել է նախակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների դասընթացների բնույթն ու հաջորդական կարգը սահմանելու համար: Գտնում էր, որ բոլոր գիտությունների մայրը փիլիսոփայությունն է, որում ներառված են տեսական և գործնական գիտությունները: Գործնական են քերականությունը, ճարտասանությունը, տրամաբանությունը, տեսական՝ աստվածաբանությունը և բնագիտությունը.վերջինի մեջ են թվաբանությունը (համարողական արվեստը), երկրաչափությունը, աստղաբաշխությունը, երաժշտությունը: Այսինքն՝ սա այն բաժանումն էր, որը հետագա դարերում ընդունված էր նաև միջնադարյան եվրոպական համալսարաններում որպես «Եռյակ» և «Քառյակ» գիտություններ: Գիտությունների՝ ըստ Անհաղթի կատարված այս բաժանմամբ («ուսումնական պլանով») են կանոնակարգվել միջնադարի հայկական բարձրագույն բոլոր հաստատությունների դասընթացները [4, 11, 12]:

3. Անանիա Շիրակացի. VII դար: Իր հիմնադրած բարձրագույն տիպի դպրոցում ուսուցման ընթացքում կոնկրետացրել-գործադրել է Դավիթ Անհաղթի կողմից գիտությունների բաժանումն ըստ գործնականի և տեսականի՝ «Եռյակ» և «Քառյակ» դասակարգման: Շիրակացին գերազանցապես հետաքրքրվել է բնագիտական հարցերով և իր աշխատություններում անդրադարձել բնագիտու-

թյան գրեթե բոլոր բնագավառներին [4, 13, 14, 15]: Նրա աշխատություններով բնագիտական գիտելիքն առանձնացավ փիլիսոփայությունից և վերածվեց հետազոտության ինքնուրույն բնագավառի: Գրել է մաթեմատիկայի դասագրքեր և բնագիտության ամենատարբեր բնագավառների վերաբերյալ աշխատություններ, որոնք ծառայել են որպես ձեռնարկներ համապատասխան դասընթացների համար: Դրանցում արծարծված բնագիտական առանցքային հարցադրումներից շատերի պատասխանները տրվեցին շուրջ հազար տարի հետո Գալիլեյի, Նյուտոնի և եվրոպական այլ մտածողների կողմից: Թագմանել և ուսուցանել է Էվկլիդեսի «Երկրաչափությունը»: Կազմել է ձայնագիտության ուսմունք՝ մեծապես հարստացնելով հայ երաժշտագիտությունը:

Որպես բնագետ-փիլիսոփա՝ զգայելին համարում էր առաջնային, զգայությունը՝ երկրորդային: Սրանով պայմանավորված՝ գիտելիքի բացահայտման խնդրում մեծ տեղ էր հատկացնում փորձին և դիտողականությանը (Գալիլեյից և Ֆրենսիս Բեկոնից դեռևս 900 տարի առաջ): Իր մաթեմատիկայի գրքի նախաբանում գրում է, որ չիմացողների և դժվարությամբ ընկալողների համար համառոտել ու պարզեցրել է նյութը, որպեսզի նրանք չձանձրանան [13]: Սա պարզից բարդը, հեշտից դժվարը ընթանալու ուսուցման մեթոդն է [2], որին շատ ավելի ուշ հանգեց միջնադարյան եվրոպական մանկավարժական միտքը:

4. Գրիգոր Մագիստրոս Պահլավունի. X - XI դդ.: Լինելով միջնադարյան Հայաստանում միակ աշխարհական փիլիսոփան՝ ծավալել է լուսավորական աշխատանք, հիմնել կրթական կենտրոններ, նպաստել հայ մշակույթի և հատկապես գիտության զարգացմանը: Հիմնադրել է սեփական բարձրագույն դպրոց (ճեմարան Սանահինի համալսարանում), որտեղ գործադրել է գիտությունների «Եռյակ» և «Քառյակ» դասակարգումը: Ղեկավարել է ճեմարան-դպրոցներ նաև Հաղպատի և Անիի համալսարանների կազմում՝ դասավանդելով հատկապես քառյակ գիտություններ [4]: Ուսումնական ծրագրերում մեծ տեղ էր հատկացնում բնագիտական դասընթացներին: Գտնում էր, որ կրթությունը պետք է լինի համակողմանի: Ուսուցման և ճանաչողության գործընթացում առաջնային տեղ էր հատկացնում զգայական ընկալմանը և ճշգրիտ գիտելիքներին, պահանջում էր աստվածաբանական կրթությունը լրացնել գործնական գիտելիքներով:

Պահպանվել է նրա նամակը՝ ուղղված ժամանակի կաթողիկոսին, որում բողոքում է Անանիա Շիրակացու աշխատությունների նկատմամբ եկեղեցու անբարյացակամ վերաբերմունքից և ամոթալի է համարում դրանք արգելանքի տակ պահելը: Իր նամակներում արծարծել է տեսակետներ կենսաբանության, բժշկության, տիեզերագիտության, մաթեմատիկայի վերաբերյալ [16]: Ինքը ևս թարգմանել և ուսուցանել է Էվկլիդեսի «Երկրաչափությունը»:

5. Հովհաննես Սարկավագ Իմաստասեր. XI - XII դար: Եղել է Անիի համալսարանի ռաբբունապետը: Կազմել է դասընթացների նոր, առաջադեմ ծրագրեր, ուսուցման գործընթացում վերացրել է ծեծը, ներդրել փորձագիտական մեթոդը [4, 16]: Նրա «Յաղագս անկիւնաւոր թուոց» դասագրքից երևում է, որ հայկական դպրոցներում (Անի, Հաղպատ և այլուր) գործնական թվաբանության հետ ուսուցանել են նաև տեսական թվաբանություն՝ թվերի տեսություն:

Գտնում էր, որ աշխարհը ճիշտ ճանաչելու հուսալի միջոցը և գիտական ճշմարտության չափանիշը փորձն է [17]:

✓ «Առանց փորձի՝ կարծիքն հաւատարմանալ (=փաստարկել) ո՛չ կարեսցեն»,

✓ «Փորձն է հաստատուն եւ աներկբայ»,

✓ կեղծիքով արված բացահայտումներն ու պնդումները գիտության մեջ ընդունելի չեն,

✓ գիտությունը լոկ կարծիքների գումար չէ. առանց երևույթների պատճառահետևանքային կապերն ու հարաբերությունները քննելու՝ անհնար է հասնել գիտական ճանաչողության:

Գիտության մեջ այս հեղաշրջող տեսության հիմնավորմանը գիտնականը հասել է դեռևս 11-րդ դարում՝ եվրոպական գիտության մեջ նույն դրույթների սահմանումից 4-5 դար առաջ…

6. Ներսես Շնորհալի. XI - XII դար: Գործել և մանկավարժությամբ է զբաղվել Կիլիկյան Հայաստանի Հռոմկլա ամրոցում: Ստեղծագործական լայն կապեր է հաստատել նաև հայաստանյան մշակույթի և գիտության նշանավոր գործիչների հետ, ծավալել է գիտության, գրականության և մշակույթի մյուս ոլորտների աշխահիկացման շարժում [4, 18, 19]:

Ստեղծագործել է գրական տարբեր ժանրերով՝ քնարական և վիպական պոեմներ, խրատական-ուսուցողական բանաստեղծություններ, հանելուկներ՝ աշխահիկացնելով գրականության նյութն ու լեզուն, բեկում առաջացնելով հայ գրականության և մշակույթի զարգացման մեջ: Գրականության նշանակությունը տեսնում էր մարդկանց կրթելու, ժողովրդի բարօրությանը ծառայելու մեջ: Լայնորեն օգտվել է ժողբանահյուսությունից՝ վերցնելով և՛ մոտիվներ ու նյութեր, և՛ տաղաչափական-երաժշտական ձևեր: Տաղաչափության մեջ հեղաշրջող դեր է կատարել: Միանգամայն նորույթ էին նրա մանկավարժական-ուսուցողական ոտանավորները և հանելուկների ժողովրդական ու ինքնուրույն մշակումները, որոնք կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունեն: Դրանցում կան մանուկներին անհրաժեշտ բազմազան օգտակար գիտելիքներ:

7. Մխիթար Գոշ. XII - XIII դար: Հիմնադրել, ղեկավարել և դասավանդել է Նոր Գետիկի կամ Գոշավանքի վարդապետարանում:

Միջնադարյան իրավագիտության մեջ դարակազմիկ երևույթ է նրա «Դատաստանագիրքը» (կենտրոնացված պետականության կողմնակից էր, գտնում էր, որ պատիժը հավասար պետք է լինի բոլորի համար՝ ուղղված դաստիարակությանը, պաշտպանում էր կանանց իրավունքները ամուսինների բռնությունից և այլն): Գոշի այս աննախադեպ ձեռնարկումն ունի նաև խիստ ազգային քաղաքական-գաղափարական ուղղվածություն ու նշանակություն, որով գաղափարաքաղաքական հիմք էր նախապատրաստում պետության ստեղծման և պետականության հաստատման համար: Սեփական պետություն չունենալու պայմաններում սա հայ ժողովրդի իրավագիտակցության, քաղաքական մտքի զարգացման արգասիքն ու բարձրակետն է [4, 20]: Իշխանության հիմնարար խնդիրներից էր համարում երկրի միասնության, միասնական իրավակեցության ստեղծումը: Առաջադրում էր ազգերի գաղափարական-դավանաբանական կողմնորոշման իրավունքը. ազգերը պետք է հարգեն կամքի ազատության միմյանց իրավունքը:

Դեմ լինելով պատերազմներին՝ արդարացնում էր պաշտպանողական պատերազմը: Մի պետության կողմից մյուսի իրավունքների ոտնահարումն ու ոտնձգությունն առաջացնում են մյուսի պաշտպանողական պայքարի իրավունքը, որը նաև միջազգային խնդիր է՝ ուղղված մարդկության բնականոն կյանքի վերահաստատմանը: Բոլորը հավասար են օրենքի առջև՝ անկախ ազգությունից, դավանանքից և սոցիալական ու քաղաքական կեցությունից: Իր առակներում նույնպես, որոնք միանգամայն նորույթ էին միջնադարյան հայ գրականության մեջ, այլաբանորեն ներկայացնում է ժամանակի հասարակական հարաբերություններն ու բարքերը, նախանշում դրանց կարգավորման ուղիները:

Որպես օրենսգիրք՝ «Դատաստանագիրքը» գործադրվել է բուն և Կիլիկյան Հայաստանում, Լեհաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, Սուդանում, Հնդկաստանում և այլուր, ուսուցանվել հայկական համալսարաններում:

8. Վարդան Արևելցի. XIII դար: Ծավալել է մանկավարժական գործունեություն. Կայենաբերդի Ս. Անդրեի վանքում հիմնել է դպրոց և դասավանդել տարբեր դասընթացներ: Ուսուցչությամբ է զբաղվել նաև Հաղպատի վանքում, ինչպես և Կիլիկյան Հայաստանում: Բարձրագույն դպրոց է հիմնել նաև Խորվիրապի վանքում, որտեղ ուսումնառած նրա նշանավոր սաներից են Հովհաննես Երզնկացի Պլուզը, Գևորգ Սկևռացին, Ներսես Մշեցին և այլք, ովքեր հետագայում Հայաստանի տարբեր վայրերում հիմնել և ղեկավարել են բարձրագույն դպրոցներ: Նրա ձեռագրերն ընդօրինակվել են բազմաթիվ անգամ: Չնայած Աստվածաշնչի մի քանի գրքերի մեկնությունները լինելու իրողությանը՝ դրանք

բովանդակում են դիտարկումներ նաև կյանքի, բնության ու բուսական աշխարհի, էվոլյուցիայի, երկնային մարմինների կազմության, շարժման ու փոխադարձ կապերի, ինչպես նաև հայ և այլ ժողովուրդների մշակութային, բանահյուսական առնչությունների, արվեստի, հայ նշանագրերի և դրանց գյուտի, քաղաքական-հասարակական այլ խնդիրների վերաբերյալ [4, 21]: Զգալի նպաստ ունի նաև երգարվեստի մասնագիտական զարգացման գործում: Խորագիտակ էր և ուսուցանել է քերականագիտություն, գրել է Թրակացու գործի մեկնություն [22]: Ուշագրավ տեղեկություններ է հաղորդել հայ բարբառների մասին, իր ապրած դարաշրջանում դեռևս կազմավորման ընթացքի մեջ գտնվող աշխարհաբարը համարել է գրաբարին հավասարապատիվ:

Նրա աշխատությունները ծառայել են որպես ձեռնարկներ ոչ միայն իր, այլև միջնադարյան Հայաստանի մյուս բարձրագույն դպրոցներում:

9. Գրիգոր Տաթևացի. XIV-XV դար: Տաթևի համալսարանի ռաբբունապետ Հովհան Որոտնեցու մահից հետո շարունակել է համալսարանի ավանդույթները: Ուսուցողական նպատակով մշակել է դասագրքեր, կազմել ուղղագրական բառարան: Մանկավարժական, եկեղեցական գործունեությանը զուգահեռ՝ զբաղվել է գիտությամբ: Իմացաբանության, հոգեբանության և մանկավարժության բնագավառներում արտահայտել է 17-18-րդ դդ. եվրոպական առաջավոր մտածողների դրույթներին հավասար մտքեր: Իր «Սահմանադրութիւն դաստիարակութեան» աշխատության մեջ հիմնավորում է կրթության և դաստիարակության իր իսկ կիրառած մեթոդները [4, 23, 24, 25].

- Երեխայի դաստիարակությունը և կրթությունը պետք է սկսել վաղ մանկությունից, քանի դեռ ընդունակությունները վառ են, իսկ հոգին չի ծանրացել հոգսերի, մեղքերի և անպետք գիտելիքների բեռով:

- Ուսուցման ընթացքում պարզ, դյուրըմբռնելի հարցերից պիտի գնալ դեպի բարդը, վերացական ըմբռնումները, քանզի մարդու ճանաչողությունը զարգանում է աստիճանաբար՝ դաստիարակության և կրթության շնորհիվ:

- Երեխայի և պատանու ներաշխարհի ձևավորման և դաստիարակության գործում մեծ դեր է խաղում դաստիարակը: Նա պետք է սանին պաշտպանի սնահավատությունից և այլ ազդեցություններից, նրա մեջ սեր արթնացնի գիտության հանդեպ, զգուշությամբ լրացնի նրա հոգևոր մաքրությունը:

- Մտավոր և բարոյական դաստիարակությունը պետք է զուգակցվի ֆիզիկականի հետ:

Տաթևացին գտնում էր, որ «Հոգի մարդոյն բանական, որպես անգիր պնակիտ է կամ լուարած մագաղաթ, որ զինչ գրեն ի վերայ, զայն առնու» [22]: Երեխայի հոգին բովանդակություն է ստանում դաստիարակության, կրթության

միջոցով և փորձով: Սա Տաթևացու կողմից Արիստոտելի՝ նորածնի ուղեղի մասին «tabula rasa-մաքուր տախտակ» արտահայտության մանկավարժական մեկնաբանությունն է, որը եվրոպական մտածողներից հետագայում՝ 17-րդ դարում, առաջինը շրջանառության մեջ դրեց անգլիացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Լոկը [6]:

10. Սիմեոն Ջուղայեցի. XVI-XVII դար: Գրել է հայոց լեզվի՝ արդի իմաստով առաջին ամբողջական քերականությունը, որը միանգամայն նորույթ էր հայոց քերականագիտության մեջ, նաև պայքար՝ լատինաբանության դեմ [25]: Աշխատությունը ծառայել է և որպես դասագիրք, և որպես հիմք՝ հայոց և վրաց քերականությունների կազմման համար:

Ջուղայեցին առաջինն է, ով սահմանազատեց տրամաբանությունը փիլիսոփայությունից և քերականությունից, մշակեց տրամաբանության տերմինները՝ հասկացություն, դատողություն, մտահանգում և այլն [4, 26]: Իր «Գիրք տրամաբանութեան» երկում իմացաբանական այլ առաջադեմ գաղափարների հետ գտնում էր, որ ճանաչողությունը կայանում է երեք աստիճանով՝ արտաքին զգայություն, որը միայն մասնավոր գիտելիք է ապահովում, ներքին զգացողություն, որի համար առարկայի ներկայությունը կարևոր չէ, և բանականություն, որը ճանաչողության բարձրագույն աստիճանն է և կապված է գլխուղեղի հետ: Ընդ որում՝ եզակին ճանաչվում է զգացողությամբ, ընդհանուրը՝ բանականությամբ: Դասակարգել է գիտությունները Անհաղթի նմանողությամբ. տեսական են բնական, գործնական՝ բարոյական գիտությունները: Առաջինները բացահայտում են իրերի բնությունը, երկրորդները տալիս են սկզբունքներ մարդու կենսագործունեության համար: Դիտարկումներ ունի հասկացության և բառի, լեզվի և մտածողության, դատողության և նախադասության կապի մասին: [26, 27]: Նրա այս երկը ամենատարածված դասագիրքն է եղել միջնադարի հայկական և ոչ միայն հայկական բարձրագույն դպրոցներում:

Հոդվածի սեղմ շրջանակներից ելնելով՝ անդրադարձանք վերոհիշյալ մտածողների միայն մանկավարժական գործունեության ընդհանուր դրույթներին՝ չներկայացնելով նրանց անբողջական ուսմունքների գաղափարաբովանդակային համալիր քննությունը, որը, ինչ խոսք, անհամեմատ բազմաբովանդակ է ու խորախորհուրդ, սակայն դուրս է մեր նպատակներից:

Այսպիսով, հայկական համալսարաններում մեր կողմից նշված վերոհիշյալ, ինչպես նաև չնշված բազմաթիվ այլ նշանավոր մանկավարժների (Հովհան Մայրագոմեցի, Ստեփանոս Սյունեցի, Հովհան Օձնեցի, Խաչատուր Կեչառեցի, Անանիա Նարեկացի, Հովհաննես Երզնկացի, Ներսես Մշեցի, Եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի, Առաքել Սյունեցի և այլք) գործունեության ուսումնասիրու-

թյունը թույլ է տալիս առանձնացնել միջնադարյան հայ մանկավարժական մտքի հետևյալ կարևորագույն դրույթները [6, 7, 8, 9].

- Որպես նախատիպ ունենալով հունական կրթական փորձը՝ ուսուցման բազմաստիճան համակարգը կիրառեցին առաջին հերթին Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Հունաստանի և Միջագետքի առաջավոր ուսումնական կենտրոններում բարձրագույն կրթություն ստացած իրենց աշակերտների միջոցով հայկական իրականություն փոխանցելով նաև այլոց հարուստ փորձն ու գիտելիքները, նրանք, որպես ուղենիշ սերունդների համար, համադրեցին ազգայինն ու միջազգայինը, և ազգայինի հետ դրեցին մշակութահարմար կրթության ու դաստիարակության հիմքը, որը պահպանվեց ամբողջ միջնադարում:

- Ուսումնական դասընթացների հաջորդականությունը, համաձայն Դավիթ Անհաղթի՝ գիտությունների տեսական և գործնական (Եռյակ և Քառյակ) բաժանման, անփոփոխ մնաց միջնադարյան բոլոր համալսարաններում: Դրանից էր բխում նաև դաս-դասարանային կարգի և դաստիարակության տեսանկյունից սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը տարբեր տիպի դպրոցներում կամ ուսուցման տարբեր աստիճաններում:

- Տեսական դրույթներն ամրապնդվում էին գործական գիտելիքներով: Տեսական նյութը հաղորդվում էր մեկնություններով՝ պարզից բարդը ընթանալու, խրթին և դժվարամարս մասերը բացատրելու համար: Այդ նպատակով ուսուցման ընթացքում կիրառվում էին նաև դիտողական, փորձառական մեթոդները: Ակնառուության մեթոդի կիրառումը կարևորվում էր հատկապես ճշգրիտ գիտություններ ուսուցանելիս. ձեռագիր մատյաններում հանդիպում են նախագծեր, ուրվագծեր, նկարներ, ուսուցողական այլ նյութեր՝ առնչվող երկրաչափություն, աշխարհագրություն, աստղագիտություն, մարդակազմություն և այլ դասընթացներին:

- Կիրառվել է սովորողներին դասապրոցեսում ակտիվ ընդգրկման մեթոդը, որն ապահովում էր տրամաբանության, դատողական կարողությունների զարգացումը: Բարձրագույն ուսումնական հաստատության սաներից պահանջվում էր տեսական բնույթի երկերի և ավարտաճառերի գիտական շարադրման կարողություն:

- Ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու և խթանելու համար, ինչպես վկայում է Գրիգոր Մագիստրոսը, կազմակերպվում էին մրցույթներ աշակերտների միջև, որով խթանվում, նաև գնահատվում էր նյութի յուրացումը հաղթահարելու ջանքը: Նույն նպատակով սովորեցնում էին նաև սրամտության, հիշողության զարգացմանը նպաստող խրատներ, ասացվածքներ, խրախճանական խնդիրներ (Շիրակացի), հանելուկներ (Ներսես Շնորհալի) և այլն:

- Գործադրվել են հարցման և ստուգման մեթոդներ: Քանի որ միջնադարում տիրապետող էր սերտման մեթոդը, ուստի սովորողի կողմից նյութի յուրացման կայունությունը պարզելու համար կատարվում էր խառը հարցում: Փարպեցին վկայում է, որ ստուգվում էր հատկապես Աստվածաշնչի հատվածները աշակերտների կողմից անսխալ անգիր վերարտադրելու կարողությունը:

- Բանավոր խոսքի և ճարտասանության զարգացումը կատարվում էր հռետորական արվեստի ուսուցմամբ: Խոսքի մշակույթին տիրապետումն անհրաժեշտ պայման էր հատկապես քահանաների և ուսուցիչների հետագա գործունեության համար:

- Կանոնակարգված էին սաների նկատմամբ ուսուցիչների տարբերակված, անհատական մոտեցումները: Ուսուցիչը պետք է ճանաչեր իր աշակերտների հոգեբանությունն ու վարքը և հանդուրժողականություն ու բարյացակամություն ցուցաբերեր նրանց նկատմամբ, ինչպես վկայում է Գանձակեցին, «աղաչանօք» (հուզչականությամբ) համբերատար բացատրական աշխատանք կատարեր: Սաները ուսուցիչներին դիտում էին որպես իրենց հոգևոր ծնողներ՝ ավարտաճառերում մեծ երախտագիտությամբ արտահայտվելով նրանց մասին: Իսկ ուսուցիչները սաներին գորովանքով կոչում էին «ձեռնասուն»՝ արտահայտելով իրենց և՛ պատասխանատվությունը, և՛ հոգացողությունը նրանց նկատմամբ:

Մանկավարժության մեջ այս բոլոր առաջադեմ սկզբունքները, որոնք եվրոպացիներից շատ ավելի առաջ կիրառել են հայ մեծանուն մտածողները, գործում են նաև մերօրյա մանկավարժության մեջ [2]: Դրանք են՝ սովորողների գիտակցականության և ակտիվության, հաղորդվող նյութի գիտականության, հաջորդականության, ակնառության, գիտելիքների կայունության, գործնական հմտությունների զարգացման, տեսականի և գործնականի կապի, անհատական մոտեցման և կրթության ու դաստիարակության այլ սկզբունքներ ու մեթոդներ: Սա նշանակում է, որ մանկավարժության մեջ կան սկզբունքներ, որոնք հավերժական են՝ պայմանավորված մարդու ֆիզիկական ու հոգեմտավոր զարգացմամբ, մարդկային հասարակության մեջ հաստատագրված բարոյական կատեգորիաներով ու նորմերով: Դարաշրջանից դարաշրջան դրանք կարող են մնալ հաստատուն՝ ավելի կատարելագործվելով և նոր իրողություններին հարմարեցվելով: Նշանակում է նաև, որ մենք, նորագույն զարգացումներից հետ չմնալու համար, ուսուցման այսօրեական մեթոդներն ու սկզբունքները պիտի որդեգրենք՝ ապավինելով մեր ազգային կրթական այս ամուր պատվանդանին:

Եզրակացություններ.

1. Անկասկած է հայ դպրության վաղեմիությունը միջնադարի եվրոպական համալսարանների համեմատ, չնայած երկուսի ակունքն էլ հունական անտիկ

դպրությունն է: Աներբա է նաև, որ անտիկ քաղաքակրթությանն առավել մոտ է կանգնած և բովանդակությամբ առավել հարուստ է միջնադարյան հայկական դպրությունը: Թեև նույնն է նաև միջնադարյան հայկական և եվրոպական համալսարաններում գործածված ուսումնական գրականությունը, քանի որ դրանք անտիկ աշխարհի մեծ մտածողների երկերն ու դրանց մեկնություններն էին, սակայն, ի տարբերություն եվրոպական համալսարանների, հայկական իրականության մեջ դեռևս 5-րդ դարից մշակվել են բազմաթիվ ինքնուրույն ձեռնարկներ՝ ամենատարբեր դասընթացների համար:

2. Հայկական համալսարաններում ի սկզբանե կրթության և դաստիարակության հիմքում դրված էր բարու, այլասիրության, մարդու նկատմամբ բարիք գործելու գաղափարախոսությունը, որը բնորոշ է այսօրվա առաջադեմ ժողովրդավար պետությունների կենսակերպին և մշակութահարմար կրթության էությանը: Դեռևս 5-րդ դարում անտիկ մտածողների գործերի շրջանառումը հայկական ուսումնական հաստատություններում արդեն իսկ նշանակում էր բազմամշակութային կրթության իրագործում:

3. Իրենց դարաշրջաններից երբեմն նույնիսկ հազարամյակով առաջ անցած հայ մեծ մտածող-մանկավարժները ոչ միայն զարգացրել են անտիկ գիտությունն ու մանկավարժությունը, այլև առաջադեմ գաղափարներով հետևողականորեն հերթագայել-համալրել են միմյանց՝ խոր ազդեցություն ունենալով հարևան, ինչու չէ, նաև Կիլիկյան Հայկական պետության ու հայ գաղթօջախների շնորհիվ, նաև այլ ժողովուրդների զարգացման վրա:

4. Հանրագումարի բերելով ամբողջ վերն ասվածը Քերթողահայր Խորենացու երկից բխող պատգամով՝ այսօր հարկ է մեկ անգամ ևս հաստատագրել նրա միտքը.աշխարհակալություններն ինքնին երկարակյաց չեն լինում, նրանք իրենց գոյության պատճառականությունն արդարացնում են, եթե մշակույթով՝ արվեստով ու գիտությամբ առաջնակարգ տեղ են գրավում ազգերի ընտանիքում: Իսկ ազգային այդ ամբողջ հարստությունը սերնդից սերունդ փոխանցվում ու պահպանվում է դպրության, կրթության ու դաստիարակության միջոցով: 5-րդ դարի հայ հանճարեղ մտածողի պատգամը հավասարապես վերաբերում է ազգային բոլոր հանրույթներին, որոնք ուզում են գոյատևել այս արևի տակ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն, Ե., 1983: **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, Ե., 1968: **Ղազար Փարպեցի,** Պատմություն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնյան, Ե., 1982: **Մովսես Խորենացի,** Պատմություն Հայոց, Ե., 1968: **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն Հայոց, Ե., 1964:

2. **Պետրոսյան Հ.Ց.,** Դիդակտիկա. ավանդական և նորագույն տեխնոլոգիաների համադրումը ուսուցման գործընթացում, ՀԱՊՀ Լրաբեր. Գիտական հոդվածների ժողովածու, Մաս 3, Ե., 2019, էջ 850-862:
3. **Կորյուն,** Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ե., 1994:
4. **Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V- XVIII դարեր),** Ե., 1976:
5. **Նալչաջյան Ա.,** Էթնիկական մանկավարժություն, Ե., 2002:
6. **Հայկական սովետական հանրագիտարան,** հտ. 1-12, Ե., 1974-1986: **Վիքիպեդիա,** ազատ հանրագիտարան:
7. **Խաչերեան Լ.,** Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները.... Միջնադարեան Հայաստանում եւ Կիլիկիայում (V- XVI դդ.), Լիզպոն, 1998:
8. **Սիմոնյան Ց.,** Հայ մանկավարժության պատմություն, Ե., 2012:
9. **Սահակյան Ա.,** Մանկավարժական մտքի պատմություն, Ե., 2010:
10. **Եզնիկ Կողբացի,** Եղծ աղանդոց, Ե, 1970:
11. **Չալոյան Վ.,** Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975:
12. **Դավիթ Անհաղթ,** Երկեր, Ե., 1980:
13. **Անանիա Շիրակացի,** Մատենագրություն, Ե., 1979:
14. **Պետրոսյան Գ.,** Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Ե., 1959:
15. **Պետրոսյան Հ.Ց.,** Անանիա Շիրակացու «Յաղագս ականց պատուականաց» աշխատությունը և հայերեն բնագիտական տերմինաբանության սկզբնավորումը վաղմիջնադարյան Հայաստանում //ՀՃԱ Լրաբեր, հտ.3, հ.1, Ե., 2006:
16. **Կոստանեան Կ.,** Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910:
17. **Աբրահամյան Ա.,** Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956: Գլաձորի համալսարանը. Համառոտ ուրվագիծ, Ե., 1988:
18. **Ներսէս Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865: Վիպասանութիւն, Ե., 1981:
19. **Ներսես Շնորհալի** /Հոդվածների ժողովածու, Ե., 1977:
20. **Սուքիասյան Ա.,** Մխիթար Գոշը և «Հայոց Դատաստանագիրքը», Ե., 1965: Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., 1978:
21. **Վարդան Արևելցի,** Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:
22. **Ջահուկյան Գ.,** Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V- XV դդ.), Ե., 1954:
23. **Գրիգոր Տաթեւացի,** Քարոզգիրք, Կ.Պոլիս, 1741: Գիրք, որ կոչի Ոսկէփորիկ, Կ.Պոլիս, 1746: Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729:
24. **Գրիգոր Տաթեւացի, Առաքէլ Սիւնեցի,** Սահմանադրութիւն դաստիարակութեան. Մեծ Մաշտոց, Կ.Պոլիս, 1807:
25. **Արևշատյան Ս.,** Տաթևի փիլիսոփայական դպրոցը և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը //Բանբեր Մատենադարանի, հտ. 4, Ե., 1958:
26. **Սիմեոն Ջուղայեցի,** Գիրք, որ կոչի Քերականութիւն, Կ.Պոլիս, 1725:
27. **Միրզոյան Հ.** Սիմեոն Ջուղայեցի, Ե., 1971:
28. **Paul Monroe,** A Brief Course in the History of Education, New York, 1907, p.145**.**

29. **S.S. Laurie,** TheRise and Early Constitution of Univer si ties, New York, 1887, p. 273.
30. **Hastings Rashdall,** The Universitiesof Europe in the Middle Ages, London, 1895, Vol 1. p. 433:

А.Ц. ПЕТРОСЯН

ИЗ ИСТОРИИ РАЗВИТИЯ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ

В раннем средневековье, после создания армянской письменности Маштоцем, параллельно с зародившимся школьным движением и строительством школ в Армении была заложена теория педагогики, которая, обогащаясь и совершенствуясь от века к веку, стала мощной опорой для развития армянской педагогической мысли. Благодаря деятельности выдающихся армянских педагогов-ученых, педагогическая мысль в средневековье наряду с определенными особенностями приобрела прогрессивный характер, исследованию которой посвящена данная работа.

Ключевые слова: строительство школ, университеты, армянские педагоги, передовые педагогические положения, развитие педагогической мысли.

H.TS. PETROSYAN

FROM THE HISTORY OF DEVELOPMENT OF THE ARMENIAN MEDIEVAL PEDAGOGICAL THOUGHT

In the early Middle Ages, after the Armenian alphabet was created by Mesrop Mashtots, together with the educational movement and school creation, the theory of pedagogy was established in Armenia, which, being enriched and improved from century to century, became a powerful background for the development of the Armenian pedagogical thought. Due to the activities of prominent Armenian teacher-scientists, in the middle ages, the pedagogical thought obtained a progressive nature with certain peculiarities of its development considered in the present work.

Keywords: school creation, universities, Armenian teachers, progressive pedagogical statements, development of pedagogical thought.